

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԼՈՒԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼՈՒԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелокъ»:
Կամ Tiflis, Rédaction «Mschak»:
Տէլէֆոն № 258:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցւում:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ:
Տէլէֆոն № 258:

ՀԱՅԿԵԱՐԻ ՕՐԱՏՈՏՈՒՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՆԻՍՏԻԿ

Երկաթուղային գծեր դեպի Կիւսիս. — Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հաղթանակ. Նամակ
Արաքսաբերդ. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Գերմանիայից. Նամակներ Պարսկաստանից. Ար-
տաքին լուրեր. — ՀԵՌԱՊԵՐՆԵՐ. — ՕՍԵՏՐԱ-
ՐՈՒԹԻՒՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Նամակներ
Ֆինլանդիայից:

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԴԵՊԻ ՀԻՍՏԻՍ

Մեր ընթերցողները գիտեն, որ ծրագր-
ված էր երկաթուղի շինել Սև ծովի ա-
րեւելեան ափերի ուղղութեամբ եւ այս-
պիսով միացնել Հիւսիսային Կովկասի եր-
կաթուղիները Անգլիոյ ափի երկաթուղա-
յին գծերի հետ: Ծրագրով համարվում
էր վերջնական ձեւով մշակված եւ քննու
նքն հաստատութիւնը, որպէս զի սկսվի
նրա գործարարութիւնը: Սակայն գործի
հէնց այդ վերջին շրջանում ծագեցին նոր
հարցեր եւ ծրագրի հաստատութիւնը չը
կայացաւ:

Այդ հարցերի մէջ ամենախոշորներից
մէկն այն է, թէ արդեօք աւելի նպատա-
կայարար եւ աւելի արդիւնաւէտ չ'է կանգ
առնել այն ծրագրի վրա, որով երկաթու-
ղին պատուում է կովկասեան լեռնային
շղթան եւ միանում անգլիոյ կասեան եր-
կաթուղու հետ Թորոս կամ Թիֆլիսի գա-
ւառների շրջանում: Այս վերջին ծրագրին
էլ բաւական լաւ մշակված է եւ իրագոր-
ծութեան մեծ հաւանականութիւն ունի:
Թէ մայրաքաղաքում եւ թէ Անգլիոյ
կառնում մեծ հետաքրքրութիւն է դարձել
այդ հարցերի առիթով: Վերջնականութեան
մասնակցում են զանազան անձինք, առաջ

ընթերցող թեր եւ դէմ կարծիքներ երկու
երկաթուղային ուղղութիւնների նշանա-
կութեան եւ այս կամ այն ծրագրի գե-
րադասութեան մասին:

Մենք շատ լաւ գնահատում ենք եր-
կաթուղային երկու գծերի նշանակութիւնը
էլ եւ չենք կարծում թէ կարելի լինի ա-
պացուցանել, որ այս կամ այն գիծը չի
տայ հական օգուտներ թէ մեր երկրին,
թէ հիւսիսին. բայց այստեղ հարցը ուրիշ
կերպ է դրված. այն է, թէ ի՞նչ գիծը ա-
ւելի կարեւոր է ներկայումս, որը ունի
ժամանակակից անհրաժեշտութեան բնա-
ւորութիւն: Այդ տեսակէտը աչքի առաջ
ունենալով, անկասկած, պէտք է գերա-
դասութիւն տալ կենտրոնական գծին, որը
բաւարարութիւն կը տայ այն պահանջին,
որ վաղուց գտնուի Անգլիոյ վաւեր ժողո-
ւորը:

Չը պէտք է մոռանալ, որ այժմ Անգլո-
կովկասեան երկաթուղին միացել է Արաք-
սի աւազանի հետ եւ որ շատ շուտով կը
զարգանան թէ մեծ երթեւեկութիւն եւ թէ
ապրանքների մեծ տեղափոխութիւն երե-
ւանեան գծի վրա, որ ձգտում է մօտե-
նալ Պարսկաստանի սահմաններին: Այդ
գծի վրա զարգացող տնտեսական կեանքը
պահանջում է, որ նա ունենայ ուսուսակա-
նական կենտրոնների հետ հաղորդակցութեան
աւելի դիւրին եւ կարծ ուղիներ, քան կա-
րող են տալ Կասպից ծովի ափերում շի-
նած եւ Սև ծովի ափերում շինվելիք եր-
կաթուղիները:

Սև ծովի ափերը չունեն մի այնպիսի
մեծ արդիւնաբերութիւն, ինչպէս Նաւթ
է Կասպից ծովի ափին, որ պահանջէ փո-
խադրութեան մեծ պատրաստութիւններ
Մովսիսի այն նեղ գիծը, որտեղ սկսել
զարգանալ գիւղատնտեսութիւնը, գեո-

շատ փոքր շրջան է կազմում եւ յամենայն
դէպս մի յայտնի աստիճանով ունի ծովա-
յին հաղորդակցութեան որոշ յարմարու-
թիւնները: Ուստի այն ժամանակ, երբ
հարց է դրված այս կամ այն ճիւղի գե-
րադասութեան մասին, բոլորովին լռիկա-
կան կը լինի այդ գերադասութիւնը տալ
կենտրոնական ճիւղին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՂԹԱՆԱԿ

Օգոստոսի 18-ին

Հաղթան գիւղը Թիֆլիսից 80 վերստ, իսկ
Թիֆլիս-Երեւան երկաթուղու Ախտալու կա-
յարանից 8 վերստ հեռավորութեան վրա է
գտնվում: Այս աշխարհը պատմութիւնից յայտ-
նի Ձորագետ կամ Գուգարաց երկրին է, ուր
չինքն էն հռչակաւոր եւ Սանահին վանքերը:
Այս անգամ այցելութեան ժամանակ Հաղթան
վանքը շատ տխուր գտայ: Նա մասխալապատ
էր եւ ոչինչ չէր երեւում, միայն վանահայրը
նստած վանքի պարսպի դրան մօտ խորատուղ-
ված էր տխուր մտածմունքների մէջ:

Հաղթան գիւղը, որ չինքն է մի հողարբի
վրա, գեղեցիկ դիրք ունի եւ բաղկացած է 130
տներից, մատաղ ուտողներին եւ հետը հաշիւ-
ով: Մատաղ ուտող են կոչվում այն աղքատ
գիւղացիները, որոնք հարկ չ'են վճարում:
Սորանք բաժնւր ունեն որդի-ղացիները իրանց
վրա ունեն վերցրած: Գիւղի օդը հրաշալի է եւ
զով, փչում է միայն հիւսիսային քամի: Ձորը
մաքուր է եւ սառը: Կատարեալ ամառանոց կա-
նելի է դարձնել, եթէ միայն կեղտոտութիւնից
ազատ պահվի, յարմար բնակարաններ ունենալ
եւ ճանապարհին էլ փոքր ինչ կարգի դնել: Աւա-
զանի եւ խաչի դրան սառնորակ աղբիւրների

հռչակը տարածվել է ամբողջ Հոփում եւ Ղա-
զախում:

Գիւղը պատկանում է իշխան Բարաթովե-
րին. այստեղ բաւականաչափ հող ունեն Հաղ-
թանի վանքը եւ Երզնկեանները: Գիւղացիները
տնտեսական կողմից գտնվում են ամենաթշուառ
վիճակի մէջ: Ամեն ինչ գտնվում է նահապե-
տական, նախնական վիճակի մէջ: Վարուցանքը
— հերկելն ու կայսելը, աղբիւրները, — ա-
նանապահութիւնը, մեղուարութիւնը —
հնազարեան դրութեան մէջ են: Վարելու, փոց-
խելու, տափանելու, հնձելու եւ կայսելու նոր
կատարելագործված գործիքների մասին գաղա-
փար անգամ չ'ունեն: Նոր ձեւով կաթ, սեր ու
պանիր պատրաստելու հաւատ չ'են ընծայում,
հին ձեւի մեղուի փեթակները դեռ եւ շարու-
նակում են իրանց գոյութիւնը: Գիւղացիների
նիւթապէս թշուառութեան զխառ պատճառ-
ներից մէկն էլ կալուածատիրոջ խիստ վաւ-
մունքն է:

Յայտնի է, որ վաթսուական թուական-
ների նշանաւոր բարենորոգումներից մէկն էլ
ճորտերի ազատութիւնը եւ կալուածատէրերի
հողերի բաժանումն էր, որից մի մասը
տրվեց իշխանին, որպէս սեփականութիւն,
իսկ միւս մասը՝ գիւղական համայնքին նա-
գել անտնով: Վերջինը համարվում է գիւ-
ղացիների սեփականութիւն, բայց պար-
տաւորված են զոյացած հացթորոյներից տալ
իշխանին (1/4), չորսից մէկը: Հաղթան-
ցիք ներկայ իշխանի հօր կենդանութեան ժա-
մանակ այդ բաժանումը կատարել, վերջացրել
են: Այժմ այդ բաժանումը հաճելի եւ ձեռնառու
չէ ներկայ իշխանին եւ նա կամենում է նորից
բաժանել տալ, որը գիւղացիները բացէ ի-
րանց մեծութեան հին իշխանի մի քանի անգամ
փորձել է իշխանութեան միջոցով կայացնել
այդ նոր բաժանումը, բայց գլուխ չէ եկել:
Այժմ նա դիմել է մի ուրիշ միջոցի, այն է՝

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻԿ

Հանգէ, օգոստոսի 6-ին

Բոլորովին այլ է գիւղական կամ համայնա-
կան ժողովրդական դպրոցների կազմակեր-
պութիւնը: Գիւղական համայնքներում հիմն-
վում են միայն բարձր ժողովրդական դպրոց-
ներ, իսկ հասարակ գրագիտական դպրոցները
ամբողջովին գտնվում են հոգեբուականութեան
խնամքի եւ վարչութեան ներքոյ: Այդ ունի իր
պատմական պատճառը. կան գիւղեր, բաղկա-
ցած միայն մի քանի տներից, որոնք առանձին
ստորին դպրոց պահել անկարող են, մինչդեռ
տեղական պատուրի կամ ընտանիքի որ եւ է
զրադէտ անդամի մօտ գրագիտութիւն սովորեց-
նելը եւ յարմար է եւ աւելի ձեռնառու, ուսումն-
գիւղական համայնքները իրանց միջոցները
կենտրոնացնում են բարձր ժողովրդական դպ-
րոց հիմնելու վրա: Այդ բարձր-ժողովրդական
դպրոցը բացվում է այնպիսի մի կենտրոնում,
որ չընկալի գիւղերի երեխաների համար յար-
մար լինի այցելելը: Եւ վերջապէս, նախնական
ուսման կամ գրագիտութեան գործը հոգեբուա-
կանութեան եւ ընտանիքի ձեռքում թողնելու
նպատակն է՝ սերտ կապ պահպանել ընտանի-
քի եւ դպրոցի մէջ:

Ամեն մի համայնք պարտաւոր է բանալ
բարձր-ժողովրդական դպրոց, երբ համայնքում
գտնվեն 30 երեխայ ուսուցիչ ցանկացող: այդ-
գիւղական դպրոց է ունենալ մի ուսուցիչ
պիսի դպրոցը պէտք է ունենալ մի ուսուցիչ
կամ ուսուցչուհի, իսկ եթէ երեխաների թիւը
50-ից աւելի է, պէտք է հրաւիրել երկրորդ
ուսուցիչ կամ բարձր մի նոր դպրոց: Ամեն
մի գիւղական համայնք, որ ցանկանում է բա-
նալ դպրոց, իրաւունք ունի ստանալ կառավա-
րութիւնից որոշ նպաստ, բայց պէտք է կա-
տարէ առաջուց հետեւալ պայմանները. 1) պէտք
է տեղեկութիւն ներկայացնել դպրոցների

զխաւոր վարչութեան, թէ ինչ է արված նախ-
նական ուսման կամ գրականութեան մասին
համայնքում, 2) պէտք է ներկայացնել ուսման
ծրագիրը, 3) պէտք է պարտաւորվել կառու-
ցանքի դպրոցական շինութիւն, որ ունենայ ա-
մենաքիչը երկու դասարան, խոնամոց եւ բնա-
կարան ուսուցչի կամ վարժուհու համար, հար-
կաւոր կահկարասիքը եւ յատկացնել ուսուցչին
2—3 տուրանդ (1—1 1/2 դեսետաթին) մշակված
հող, ինչպէս եւ տալ կեր գոնէ մի կովի համար:
Կառավարութեան նպատակը կայանում է նրա-
նում, որ նա վճարում է մի ուսուցչի կամ
վարժուհու առձեռն, որ 800 մարկ է (800 ր.),
իսկ համայնքը տալիս է բնակարան խոնամո-
ցով, փայտ, խոտ՝ կովի համար, 230 մարկ եւ
50 մարկ էլ նրան յատկացրած հողի մշակու-
թեան համար: Ընդամենը ուրեմն ուսուցչի
ստանում է 1080 մարկ կամ 410 ռուբլի: Սա-
կայն 5 տարուց յետոյ առձեռն աւելանում են եւ
100/0-ով, 10 տարուց յետոյ եւ 100/0, իսկ 20 տա-
րուց յետոյ — 200/0: Վարժուհին 200 մարկ պա-
կայն է ստանում ուսուցչից: Դրանով չէ վեր-
ջանում հասկացողութիւնը ժողովրդական ու-
սուցչի մասին. հաստատված կայ գրամարկը,
որից կենսաթոշակ է յատկացնվում ուսուցչի
մահից յետոյ նրա այրուն եւ որեւէրիս: Ամեն
մի համայնքական դպրոց ունի 6 հոգուց բաղ-
կացած ընտրական հոգաբարձութիւն, որի նա-
խագահն է սովորաբար տեղական պատուրը
եւ որը կառավարում է դպրոցի անտեսական
մասը: Ուսումնական մասի վրա հսկում են
կառավարական տեսուչներ, որոնց թիւը 12 է
գիւղական դպրոցների համար: Տեսուչներին
նշանակում է դպրոցական զխաւոր վարչու-
թիւնը, որ մի կողմէրէ կառավարութիւն է,
ենթարկված սենատի հոգևոր ղեկավարման
տին (քաղաքային ժողովրդական դպրոցների
տեսուչներին ընտրում է քաղաքը): Դպրոցա-
կան տեսուչը հսկում է դպրոցի ներքին կար-
գի, ծրագրի անթերի կատարման վրա եւ առ-
րին մի անգամ իր չընկալի ժողովրդական ու-
սուցչիներին համաժողով է գումարում իր նա-

խագահութեամբ: Բացի դպրոցական տեսուչնե-
րից կայ ժողովրդական դպրոցների ընդհա-
նուր վերատեսուչ, որ դպրոցական զխաւոր
վարչութեան անդամ է: Ընդհանուր վերատես-
ուչը պէտք է անպատճառ համալսարանական
որումն ունենայ եւ հմտւած մանկավարժ լինի
ուսումնական ժողովրդական դպրոցների հետ:
Նա պարտաւոր է այցելել ժողովրդական դպ-
րոցները, ամեն տարի ընդհանուր տեղեկագիր
ներկայացնել ընդհանուր վարչութեան եւ նա-
խագահել ժողովրդական ուսուցչիներին, ընդ-
հանուր համաժողովին, որ գումարվում է երեք
տարին մի անգամ: Բացի դրանից նա պար-
տաւոր է հսկել եւ ուսուցչական տեսուչներին
նրի վրա եւ զեկավարել գործնական պարագ-
մունքները այդ տեսուչներին:

Ժողովրդական դպրոցի ուսուցիչը եւ ուսուց-
չուհին պէտք է անպատճառ աւարտած լինեն
իրանց ուսումը ուսուցչական տեսուչների
րում: Ամբողջ ֆինանսիայում, ժողովրդական
ուսուցչիներն եւ վարժուհիներ պատրաստելու
համար, 4 տեսուչական կայ, մինը Ֆինանսիան,
արական եւ իգական գուգահեռական բաժան-
մունքներով, երկրորդը՝ չլիզական իգական,
երրորդը՝ չլիզական, արական եւ չորրորդը՝
Ֆինանսիան, արական եւ իգական բաժանմունք-
ներով: Սեմինարիաները գիւղութիւկ դպրոցներ
են, բայց ընդունվում են եւ երթեւեկներ ու ա-
ղաւ ունկնդիրներ: Մասնորը պէտք է բարձր
ժողովրդական դպրոցի ուսման վկայական ու-
նենայ: Ուսման առարկաներն են — կրօն, ժո-
ղովրդականագրութեան հոգեբանութիւն, իբրեւ հին
մանկավարժութիւն, անակավարժութիւն (կըր-
վարական տեսուչների պատմական ակնարկ,
ուսուցման մեթոդիկա), Ֆինանսիայ, չլիզական
լիզական, մաթեմատիկա, աշխարհագրութիւն,
Ֆինանսիայի պատմութիւն եւ վիճակագրու-
թիւն, բնական պատմութիւն, անատոմիա, ֆի-
զիոլոգիա եւ անատոմիա, մայրիկագրու-
թիւն, գծագրութիւն եւ նկարչութիւն, երգեցու-
ղութիւն եւ երաժշտութիւն, մարմնամարզու-
թիւն: Ամեն մի տեսուչարիւր կից հաստատ-

ված են երկու նորմալ ժողովրդական դպրոց,
մինը՝ ստորին երեքամսայ դասընթացով, միւսը՝
բարձր վեցամսայ դասընթացով, որպէս զի սե-
մինարիաները — աղաքայն ուսուցչիները եւ վար-
ժուհիները — հնարաւորութիւն ունենան փորձ-
նական դասեր տալ եւ ծանօթանալ ժողովրդա-
կան դպրոցի կազմութեան հետ: Բացի դրանից
տեսուչներին անհրաժեշտ են՝ տղաներին —
այդգործութիւն, երկրագործութիւն, մի քանի
արհեստներ, իսկ աղջկաներին՝ ձեռագործ,
տնտեսութիւն եւ այդգործութիւն: Աւարտողը
ստանում է ժողովրդական դպրոցի ուսուցչի
պաշտօն:

Գիւղական բարձր ժողովրդական դպրոցների
ուսման ծրագիրը նոյնն է, ինչ որ քաղաքային
համաժողովրդական դպրոցների ծրագիրը: Մի բան
մեզ անհանելի երեսաց ժողովրդական դպրոցներում
իբրեւ մանկավարժական միջոց, գործադրվում է
մարմնական պատմութեւն: Ճիշտ է, այդ պատմութեւն
չառ թիւն է եւ կայանում է միայն մեղաւոր
աշակերտի ձեռքի տալիս մի քանի անգամ (ա-
մենաշատը 6 անգամ) զանազան խփելուն մէջ,
բայց այնուամենայնիւ նա համարվում է մարմ-
նական պատմութեւն: Եւ զարմանալիս այն է, տ-
սում է Պրօտօպօպովի գիրքը, որ ժողովրդա-
կան ուսուցչիներին 10-րդ համաժողովում, ու-
սուցչիներին եւ վարժուհիներին մեծամասնու-
թիւնը պաշտպանում էր մարմնական պատմութեւն
իւրեւ, որ տքնում էր ապացուցանել այդ
պատմութեւն անարդարականացուցիչ աղբիւրութիւնը:
Ուսումը ֆինանսիայի ժողովրդական դպ-
րոցներում, ինչպէս եւ միջնակարգ ուսումնա-
րաններում, կատարվում է մայրենի եւ չլիզա-
կան լիզականով, որ գրեթէ նոյնպէս մայրենի
է համարվում, թէ հետզհետեւ տեղի է տալիս
Ֆինանսիային Ռուսաց լիզական մինչեւ այսօր
պարտաւոր չէր եւ միայն 2 ամիս առաջ կայ-
սերական հրովարտակով հրամայվեց պարտա-
գիր անել, բայց միայն միջնակարգ դպրոցնե-
րում, այն է գիմնազիաներում եւ իշխական
դպրոցներում:

Հ. Առաքելյան
